

կաւորիւր քննել զպատճառելիսն. զի իբր ծանօթիւք ոմամբք զանձանօթ պատճառսն իմանալ կարիցէր. զոր օրինակ թէ վասն ոյր պատճառի հրեշտակքն անմարմինք եւ աննիւթք գոլով, մարմնաւորապէս եւ նիւթեղինաբար նկարագրին ի Սուրբ Գիրս. արդարեւ բազում լինիւր սխալումն եթէ ի պատճառսն այնպիսաբար խօսելոյն ոք ոչ նկատիցէր: Քանզի որքան հեռի արեւելք յարեւմտից եւ երկինք յերկրէ, զն անդր առաւել տարակցեն բնութիւնք հրեշտակաց՝ ի մարդոյ յառիւծու, եղին եւ արձւոյ կերպարանաց: Ղլասն որոյ սքանչելի իմն հնար աւանդեաց հեղինակն բնութեան եւ զայնոսիկ տարակուսանաց տարալուծութիւնսն յանձնեաց այլաբանականի մեկնութեան ի ձեռն անօթից իւրոց շնորհաց, որոց ոմանց զնկարագրականին յանձնեաց եւ ոմանց զետրհրդականին, ոմանց զհոգեւորին, եւ ոմանց զբարոյականին եւ զբոլորն յանձնեաց Հարսին եւ դստեր իւրոյ սրբուհւոյ մօր Եկեղեցւոյ. եւ նա զորդիս իւր խրախուսեաց իբրեւ որսաւորաց եւ ձկնահանից յանատակ ծովէ եւ յանկրխ լեռանց զակունս պատուականս եւ զքաղցրաձայն թռչունս զանազանից մեկնաբանութեանց գտանել: Որոց ոմանք, որպէս սուրբն Գրիգոր Նիւսացի, ոչ միայն յորժամ զՍուրբ Գիրսն մեկնէրն՝ այլաբանէր, այլ եւ առ ինչ զոր միանգամ նկատեալ դէպ լինէր, զայնոսիկ առ հոգեւոր կերպն յեղաշրջել ախորժէր, որպէս եւ զնմանէ պատմէ Ռուֆինոս թէ զայս ինքեան սովորութիւն ստացեալ էր. զի զոր ինչ եւ պատահիւր աչացն յարտաքնոց իրաց, հոգւոյ ներքսագունի բարուցն յարմարացուցանէր: Որպէս եւ ինքն երանելիք ասացեալ գոլ վկայի զինքենէ, թէ սովորութիւն էր ինձ առիս ինքնս առ իւրաքանչիւրսն զիս դարձուցանել. մանաւանդ թէ հանգստութիւն էր ինձ ցուցանել զտեսեալսն աշօք իմովք: Ուստի եւ տեսութիւն աչաց իմոց էր